

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱԽՆ ԿԻԼԻԿԻՈՆ


**ԱՍՏՈՒԱԾ ԻՐ ՄԻՐՈՎ
ԱՏԵՂԾԵՅ ԶԻՍ**

ՈՒՍՈՒՑՁԻ ՈՒՂԵՑՈՅՑ

6 տարեկան, Ա. մաս

Դաս 1-18

**ԱՆԹԻԼԻԱՆ
2009**



Հրայասահ

Ն. Ս. Օ. Տ. Տ.

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Աշխատանքը իովանաւորուած է Մեծի Տաօս Կիլիկիոյ Կաթողիկոսութեած կողմէ,
Կիրակնօրեայ Դպրոցներու, Խոգեւոր ուսումնական հիմնարկութիւններու
եւ ամենօրեայ Վարժարաններու մէջ կրօմի դասաւանդման համար

Յովանաւորութեամբ

World Vision

միջազգային քրիստոնէական բարեսիրական միութեան

Եւ

WV DIRECT

կազմակերպութեան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներածական	7
Դաս 1 – Աստուած կը ստեղծէ աշխարհը	17
Դաս 2 – Արեւը, լուսինը եւ աստղերը լոյս կու տան մեզի	21
Դաս 3 – Աստուած ջուրը ստեղծեց՝ աշխարհին կեանք տալու համար	25
Դաս 4 – Գոհաբանութիւն Աստուածոյ՝ իր կատարած ստեղծագործութեան համար	29
Դաս 5 – Ի՞նչ սքամչելի արարած մըն եմ ես	32
Դաս 6 – Աստուած զիս կը ճանչնայ իմ անունովս	36
Դաս 7 – Ես կրնամ լսել եւ մտիկ ընել	40
Դաս 8 – Աստուած կ'օգնէ ինձի, որպեսզի մէծնամ	44
Դաս 9 – Նոյը ազատուեցաւ ջրհեղեղէն	48
Դաս 10 – Ցովնանը կետ ձուկին փորին մէջ	53
Դաս 11 – Ցիսուս կը համդարտեցնէ փորորիկը	56
Դաս 12 – Ցիսուս իր ընկերները կը կերակրէ	60
Դաս 13 – Առաջին ընտանիքը	64
Դաս 14 – Զաւակները մէծ ուրախութիւն կը պատճառեն իրենց ծնողներուն	68
Դաս 15 – Զաքարիա եւ Եղիսաբէթ կ'ուրախանան	73
Դաս 16 – Ցովսէի այս աշխարհի վրայ Ցիսուսի հայրը կը դառնայ	78
Դաս 17 – Սուրբ Խաչի Վերացման տօնը (Խաչվերաց)	83
Դաս 18 – Ցիսուսի ծնունդը	88
Ամէնօրեայ աղօքներ	93

Դ ԵՐԱԾՈՎԱՆ

ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍՔ ԴԱՍԸՆԹԱՑՔԻ ՄԵԹՈՒՏԻՆ ՄՎԱՆ

Այս դասընթացքը Քրիստոսակերպություն մերու համար պատրաստուած ծրագիր մ միջոցաւ պիտի ծանօթացուի Աստուծոյ մենարդկութեան: Քրիստոնեական տարբեր մերու համար, այս ծրագիրը միեւնոյն նպատակը կը հետապնդէ, Սուրբ Գրային դասերուն միացը եր դաւանանքներու աւանդութիւնները:

Աստուծա «տարբեր կերպերով խօսեած է» (Եբր. 1.1): Ան ինքինք յայտնած է անցեալին իր դիմ: Ան զանոնք առաջնորդած է ծշմարտութեան: Աստուծոյ ինքնայայտնութիւնը շարունակութեանը է: Ուղղափառ աշխարհին համար, Աստուծոյ ինքնայայտնութեան այս ընթացքը Սուրբ Աւանդութիւն կը կոչուի, որ առհասարակ գումարն է դարեցին Եկեղեցոյ ապրած փորձառութեան: Առաջայտուած է Սուրբ Գիրքով, արարողութեանը ծէսերով, հայրերու գրականութեամբ, սրբիւններով, պահեցողութեամբ եւ տօներով կամ երաժշտութեամբ եւ արուեստներով, աւանդութեան եւ Սուրբ Գրոց միջեւ կապ ստորանչիր դասի պարագային, կը յուսանք մօտ հաւատքի փորձառութիւնը գօրականութեանը կապը սերտացնել:

Աւելին, սոյն դասընթացքը կը փորձնիմ մնալ ու հետեւիլ կրօնական դաստիարակությունը ներուն ընդհանրապէս, եւ առաջնահատքի արդի սահմանումներով: Սեր մօտենաւութիւնն է Մեծ Վարդապետին՝ Յիսուս Քրիտարած ուսուցումներու կերպին:

Յիսուս իր ումկնդիրները մղեց գտնելու ճշմարտութիւնը, իր ուսուցումներուն ճամբով: Սաւածներ եւ առակներ օգտագործեց, որոնք ունեն կապուած էին ժողովուրդին առօրեայ պատմութեամբները առիթ կու տային ու յինդիրներուն չուտով ընտելանալու նիւթին: Անոնց տալու փոխարէն, Յիսուս զանոնք մանձնական փորձառութեամբ բան մը սորելու: Ներկայ ժամանակներու ուսուցողական կերպերուն մէջ ասիկա կը կոչուի փորձառական մօտեցում:

Յիսուս նաեւ հարցադրումներ օգտագործեց, որոնց միջոցաւ իր ումկնդիրները պիտի յայսաբերեին ճշմարտութիւնը: Իր հետեւորդներուն տարբերեած աստիճանի զարգացումները նկատի ունենալով, ի

կալելու տարբեր աստիճանաշափերը ու պատրաստակամութիւնը անոնց, Ան չմեկնեց իր պատմած առակներու բոլորին, այլ միայն Տասներկութին: Ան գիտէր, որ ժամանակ մը ետք իր խօսքերը պիտի արդիւնաւորութին անոնց սրտին մէջ, եւ անոնք պիտի սկսէին հասկընալ: Վերջապէս, Յիսուս համբերութեամբ եւ սիրով վարուեցաւ բոլորին հետ, ընդունելով այնպէս ինչ որ են անոնք: Ան լաւ գիտէր, որ հոգեկան զարգացումը ժամանակի կը կարօտի, երբեմն ամբողջ կեանքի ժամանակաշրջան մը պէտք է: Ուստի Ան համբերութեամբ եւ առանց նախապայմանի կը սպասէ մեզմէ իւրաքանչիւրը, որպէսզի հոգեկան հասունացում ունենանք:

ԴԱՍԸՆԹԱՑՔԻ ԾՐԱԳԻՐԸ

Սեր դասընթացքը կազմուած է 6-17 տարեկան աշակերտներու համար, 36 դասերով, որոնք երկու հատորներու մէջ բաժնուած են, իւրաքանչիւր տարուան համար: Իւրաքանչիւր աշակերտի գիրք ունի իր ուսուցչի ուղեցոյցը:

Դասերուն իիմնական թեման կը կերպունանայ Յիսուս կամ Նոր Կտակարաններէն քաղուած Սուրբ Գրային պատմութեան մը վրայ: Սուրբ Գրային պատմութիւնը կը բացուի «Գիտէի՞...» վարժութեամբ մը, որ կ'օգնէ աշակերտին իր փորձառութեամց մասին մտածելու եւ նատուցուող նիւթը կապելու ուղղակիորեն իր կեանքին:

Սուրբ Գրային տուեալ պատմութիւն յարնարցը աշակերտի տարիքին, իւրաքանչիւր դասարանի պարագային՝ իրեն յատուկ նակարդակով, յատկապէս այն վարժութիւններով, որոնք Վերաքաղի կը ծառայեն: Սուրբ Գրային պատմուածքները իւրաքանչիւր տարուան համար մասնաւոր նիւթի մը շուրջ ընտրուած են, տարիքին յարնարութիւնը նկատի ունենալով, եւ անոր պատշաճեցուած են նաեւ Եկեղեցոյ աւանդութիւնները՝ ընտրովի, որ սոյն դասընթացքին նպատակներէն մէկն է: Այսպիսով, Սուրբ Գրային պատմուածքն ու Եկեղեցոյ աւանդութիւնը դիւրաւ կը շաղուին իւրարու աշակերտին մէջ:

Վեց տարեկան մանուկներուն բնական հետաքրքրութիւնը նկատի ունենալով գիրենք շրջապատող աշխարհին հանդէա, այս տարիքի դասերը կը կերպունան մանկական աշխարհին շուրջ, զարգացընելով անոր յարաբերութիւնները իր անձին ու շրջապատին հետ: Շեշտը դնելով մանուկին իր հօր ու մօր

հետ յարաբերութեան վրայ, մանուկը պիտի պատրաստենք հասկնալու Աստուծոյ հայրութեան առաւելութիւնները, իբրեւ մեր Արարիչը եւ մեր կարիքները հոգացող էակ, եւ մեկը որ կը սիրէ մեզ այնպէս ինչպէս որ ենք:

Առաջին գիրքին 18 դասերը ըստ Ծիրի բաժնը ևած են, աւելի եւս շեշտելով այս տարուան համար մեր ընտրած ընդհանուր խորագիրը:

Ա. Մաս – Աստուած գեղեցիկ աշխարհ մը ստեղծեց

Մանուկները կը սիրեն կեանք իրենց շուրջ, եւ կը վայելեն Աստուծոյ ստեղծագործութեան հրաշալիքները: Այս մասը կը գոհացնէ մանուկներուն բնական հետաքրքրութիւնը եւ մնայուն հարցադրումները աշխարհի ստեղծումին մասին, ստեղծագործութեան պատմութեան միջոցաւ:

Աւետարանէն քաղուած համապատասխան հատուածներուն եւ Սաղմոսներու միջոցաւ, աշակերտները կը գիտնան ու կը սորվին, թէ արեւը, լուսինը, աստղերը, ջուրը եւ աշխարհի մէջ ամէն բան Աստուծոյ կողմէ ստեղծուած են մեր Վայելքին համար:

Բ. Մաս – Աստուած իր սիրով ստեղծեց զիս

Մանուկները այս տարիքին շատ արագ կերպով կ'ածին: Իրենց ֆիզիքական աճումին կ'ընկերանայ նաեւ իրենց կարողութեանց աճը, ինչպէս նաեւ կը կազմաւորուի անոնց անհատականութիւնը, իբրեւ Աստուծոյ կողմէ ստեղծուած անձնաւորութիւններ:

Այս մասը մանուկներուն կը սորվեցնէ թէ ո՞վ են իրենք իբրեւ Աստուծոյ կողմէ ստեղծուած արարածներ, եւ կը սկսին գնահատել Աստուածպարգև իրենց կեանքը:

Գ. Մաս – Վայելեցէք այս պահնչելի աշխարհը

Այս մասը պատրաստուած է մանուկներուն պատմութիւն սիրելու ընդունակ սիրոյն հետեւողութեամբ: Յին թէ Նոր Կոտակարաններէն քաղուած ընտրեալ պատմութիւններու միջոցաւ, աշակերտներուն դիմաց կը բացուին ստեղծագործութեան հրաշալիքներ:

Նոյեան Տապանի պատմութեան միջոցաւ աշակերտները աօիթ կ'ունենան Վայելելու բոլոր անասունները, որոնք Աստուծոյ կողմէ ստեղծուած են, ինչպէս նաեւ տեսնելու ջրիեղեղի տխուր դէպքը: Կետին փորին մէջ Յովնանին մնալուն պատմութիւնը լուսարձակի տակ կ'առնէ Աստուծոյ ստեղծագործութիւններուն միայն մէկը: Երկու պատմութիւններ Նոր Կոտակարաններ կ'օգնեն որ մանուկներ սիրեն կլիման, եւ ամբողջ սնունդը, որ Աստուած կը պարգտէ մեզի:

Դ. Մաս – Աստուած ընտանիքներ կը կազմէ

Մանուկի մը անդամակցութիւնը ընտանիքին, անոր առաջին եւ ամէնէն կարեւոր փորձառութիւնն է համայնքի մը անդամակցութեան: Աստուածաշունչի առաջին ընտանիքին նայելով, անոնք նմանութիւններ եւ տարրեղութիւններ կրնան մկատել իրենց եւ այդ ընտանիքի հարազատներուն յարաբերութեանց միջեւ: Իսահակի ծննդեան պատմութեամբ անոնք կը սորվին թէ մանուկներուն ծնունդը ինչքան ուրախութիւն կը պատճառէ անոնց ծնողներուն: Ասիկա աւելի կը շեշտուի իրենց ծոս, երբ կը կարդան Զաքարիայի եւ Եղիսարէթի սարքած ուրախութիւնը՝ իրենց ծնած զաւակին համար: Վերջապէս, անոնք կը սորվին յարգել իրենց հայրն ու մայրը, լսելով Յիսուսի Երկրաւոր հօր՝ Յովսէփի կատարած հայրութիւնը Յիսուսի:

Ե. Մաս – Աստուծոյ ընտանիքը կը տօնախմբէ

Խաչվերացի տօնը ներկայացնող դասը եւ Ս. Ծննդեան տօնը, օրինակներ են, թէ Եկեղեցին ինչպէս կը տօնախմբէ կարեւոր դէպքերը:

ԴԱՍԿԱՆԱԼ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԵՒ ԱՆՈՆՑ ԻՒՐԱՅԱՏՈՒԿ ՆԿԱՐԱԳԻՐՆԵՐԸ

Դէպի Աստուած ընթանալը իւրաքանչիւր մարդուն ուղղուած կոչ մըն է: Այս ճանապարհորդութիւնը կը մկի ծնունդով ու կ'աւարտի մահուամբ: Իւրաքանչիւր մարդու հաւատքի ճամբորդութիւնը իւրայատուկ է իրեն, այնուամենայնիւ, անիկա հասարակաց նմանութիւններ ունի համայն մարդկութեան հետ: Իւրաքանչիւր մարդու կեանքին մէջ դէպքեր կը պատահին, որոնք կ'ագին հաւատքի զարգացման: Երբեւ կրօնի ուսուցիչ, դուր կոչուած էք ծեր բաժինը բերելու ծեր աշակերտներու քրիստոնէական հաւատքի կազմաւորման ու զարգացման: Երբ գիտմաք թէ ծեր աշակերտները ինչպէս կը զարգանան հոգեւորապէս, ինչպատճառ աւելի դիմութիւն պիտի ունենաք համապատասխան վարժութիւններ ծրագրելու, եւ զանոնք սորվեցնելու այնպիսի կերպով, որոնք խորացնեն անոնց հաւատքը:

ՎԵՅ ԵՒ ԵՕԹ ՏԱՐԵԿԱՆՆԵՐՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Ասիկա հիմնուած է Զարգացման Յոգեբաններուն ժան Փիակէի, Յառւըրտ Կարտնըրի, Լորընս Քոհըլայըրկի, Էրիք Էրիքսոնի եւ ճեյս Ֆլաուըրի կատարած ուսումնասիրութիւններուն վրայ, յատկապէս բա-

րոյական, հոգեբանական եւ հաւատքի զարգացման մարզերէն ներս, քաղուած տարբեր աղբիւրներէ:

Զարգացման յատուկ նկարագրային գիծերը վեց եւ եօթ տարեկաններու մօտ իրարու շատ ննան են: Այս բաժնին մէջ երկուքն ալ ներկայացուած են, զատորոշելով զանոնք իրարմէ:

Եթե վեց եւ եօթ տարեկան աշակերտները նկատի առէ որ երկար ճամբայ կտրած են իրենց մանկութենէն մինչեւ իհնա: Իրեւ մանուկներ, իրենց կանուխն մանկական տարիներուն, իրենց կրօնական փորձառութիւնը զարգացած է համաձայն իրենց ապրած միջավայրին եւ անոր ազդեցութիւնը կրած: Պատկերներ, ծայներ, շարժումներ եւ այն եկեղեցին ուր յաճախած են, իրենց տուած կ'ըլլան նախաճաշակը Եկեղեցւոյ կեանքին եւ Աստուծոյ ժողովուրդը ըլլալու հասկացողութեան:

Իրեւ մանուկներ երբ նոր դպրոց կու գան, նոյնիսկ 5 տարեկանին կամ անկէ կանուխ, ամոնց զարգացումը կը շարունակուի մեծերու կապկումով եւ կամ շրջապատին մէջ գտնուողներուն ընդորինակութեամբ: Այս միջոցին, Եկեղեցւոյ շրջապատին մէջ գտնուող անձերուն խօսքերը, մտածումները եւ փոխադարձ յարաբերութիւնները մեծագոյն դասը կ'ըլլան ամոնց մանկական հաւատքին աճնան համար:

Վեց-եօթ տարեկանին, դպրոցական առաջին տարիներուն, երեխան կը սկսի գիտութեամբ եւ փորձառութեամբ աճիլ, փոխ-յարաբերութեան կարողութիւնները կը զարգացնէ, եւ կը սկսի ուրիշին իրաւունքները ճանչնալ: Արագ աճնան այս վեցտն եօթը տարին, մանուկները ձեռք կը ծգեն փոխ-յարաբերութեան կարողութիւնը, յատկապէս խնբային աշխատանքներով, եւ այսպիսով աճնանկերունութենէ դրւոս գալով ուրիշներուն իրաւունքները կը ճանչնան: Այս տարին, գործնապէս մասնակցութիւնը լաւագոյն դասը կ'ըլլայ մանուկին համար, քան թէ ուսուցչին լսելով սորվիլը: Փորձառական այս դաստիարակութիւնը առիթ կ'ըլլայ որ ան լաւապէս հասկնայ Եկեղեցւոյ հաւատքի պատմութիւնը:

ՎԵՑ ԵՒ ԵՕԹ ՏԱՐԵԿԱՆՆԵՐՈՒ ԿԵՐՊԱՐԸ

Վեց եւ եօթ տարեկանները ֆիզիքապէս ինքնանկախ կը դառնան որոշ չափով, եւ կարգ մը բաներ առանձին կը կատարեն: Ամոնք կրնան իրենց շրջապատին մէջ գտնուող ամեն բան նշանալ, ամոնց մօտենալով, շօշափելով, եւ աշխարհը կը սկսի ճանչնալ իրենց զարգայանքներուն ճանչնալ:

Ուրախութեան եւ հետաքրքրութեան փորձառութեամբ կը յատկանշուի այս տարիքի մանուկներուն

կեանքը: Ամոնք կը սիրեն պատմութիւնն ըր լսել, սակայն անոնք կը սիրեն իրենց ամսնական փորձառութեամբ սորվիլ: Յակառակ անոր որ իրենց ուշադրութիւնը աւելի երկար կը տեսէ քան իհնոգ տակեկաններու ուշադրութիւնը, սակայն պէտք է ջանաք գայն երկար պահել՝ գիրենք հետաքրքրող վարժութիւններով:

Եթե մտածենք վեց եւ եօթ տարեկան մանուկներուն մասին, մեր յիշողութեան մէջ կ'արթն նայ Յիսուսի նոյն տարիքը: Ան ալ միեւնոյն տարիքէն անցաւ, եւ նոյն փորձառութիւնները ունեցաւ, ինչպէս կը դասանինք Նիկիական Հանգանակին մէջ: Ասիկսի գիտնալով, մենք պէտք է մեզի յանձնուած իւրաքանչիւր մանուկին մէջ տեսնենք Յիսուս մանուկը: Սուրբ Կոստանդիոս Մարիամի նման, որ Յիսուսի առաջին ուսուցչուին էր, մենք պէտք է առողջ կազմաւորում տանք մերւ վեց եւ եօթ տարեկան աշակերտներուն:

ԸՆԴՀԱԿԱՆ ԶԱՐԳԱՐՈՒՄ

Վեց եւ եօթ տարեկանները իրենց ու դդակի փորձառութեամբ աւելի լաւ կը սորվիլ՝ ինչպէս աշխատիլ, շարժիլ, դպչիլ, հոտոտալ, երաժշտութիւն ունենողել կամ երգել, եւ ծեռային աշխատանք կատու սրել: Կրկնուող փորձառութիւնները ինքնուս կը դարձնեն գիրենք: Ամոնք տակաւին չեն կրնար վերացական եզրեր հասկընալ, կամ գաղափարներ ու ըմբռնումներ ընկալել: Պատմութիւնները յստակ դեպեր, վայրել եւ մարդիկ կը պատկերնցնեն իրենց դիմաց: Այս պատկերները կ'օգնեն անոնց, որպէսզի յիշեն պատմութիւնը:

Վեց տարեկանները կը սկսին ընթէ դցանութիւն սորվիլ, իսկ շատ մը եօթ տարեկան եղանենք, արդէն իսկ ընթերցել կը գիտնան: Ասիկա նկատ ունենալով, վեց տարեկանի ուսուցչները պէտք է սառաջնորդեն դասարանին մէջ ընթերցանութիւնը, որպէսզի դիւրութիւն ընծայեն աշակերտին զարգացնելու նիր ընթերցելու կարողութիւնը, դասը դարձնելու համար հաճելի վայելք մը:

Այս տարիքի մանուկները պարտ սկանութիւն աւարտելու գիտակցութիւն կ'ունենան եւ նիշով գնահատութիւն հապարտութիւն կու տայ իրենց Ամոնք ժամանակի պէտք ունին, որպէսզի պարտականութիւնները ամբողջացնեն, այլապէս մրցակցութեան ոգին կը սրի անոնց մէջ:

ԸՆԿԵՐՈՎԱԿԱՆ ԶԱՐԳԱՐՈՒՄ

Վեց տարեկան երեխանները տակա ին մեծ մասամբ չափահասներու ազդեցութեան տա և կ'ըլլան, եւ ամոնց անհատականութեան կողքին կ'ած ին:

Յակառակ անոր որ Եսակեդրոնու իւնը իրենց վաղ տարիներէն տակաւին կը շարունակէ մնալ իրենց

մեջ, սակայն խմբային աշխատանքներու մեջ դեր վերցնելու պարտաւորութիւնը ուրիշներն ալ հաշուի առնելու ստիպողութեան տակ կը դնէ զիրենք:

Վեց տարեկանները բաւական ինքնավստահ կ'ըլլան, մանաւանդ երը նոր սովորութիւններ կ'որդեգրեն: Անոնք այնպէս կը զգան թէ ամեն բան գիտեն: Վեց տարեկանները ազատօրէն կ'արտայայտեն իրենց զգացումները եւ ապրումները, իսկ ուրիշներու զգացումներէն շատ կ'ազդուին: Անոնք ապահով կ'ուզեն զգալ, կ'ուզեն սիրել եւ սիրուիլ:

Եօթ տարեկանները մեծ սպասումներ կ'ունենան իրենք իրենցմէ եւ ուրիշներ: Եթէ պատահի որ անոնք չհասնին իրենց ուզածին, կը դժգոհին ու կու լամ: Իրենց մօտ աճող զգացումը ուրիշներու գոյութեան, զիրենք ուշադիր կը դարձն նաեւ իրենց անմիջական միջավայրին: Վեց տարեկաններուն ննան, եօթ տարեկաններն ալ կը շարունակեն անծնական ապահովութիւն փնտուել, սիրել եւ սիրուիլ, եւ մեծերու կարգին դասուիլ:

Բարոյական գարզացում

Վեց եւ եօթ տարեկաններու մօտ ընտրութիւնը բարիի եւ չարի, եսակեդրոն մղումներով կը յառաջանայ.- Վարձատրութեան զգացում եւ պատիժի վախ: Այս տարիքի երեխանները կ'ուզեն գոյացնել իրենց խնամատարները՝ ծնողներ, ուսուցիչներ, պատասխանատուններ եւայլն, պատիժը հեռու վանելու եւ վարձարուելու փափաքով: Անոնք «ճիշդ»ը պիտի ընտրեն, յոյս ումենալով որ իրենց այս արարքը պիտի գնահատուի ուրիշներ:

Վեց եւ եօթ տարեկանները յստակ ուղղութիւն պետք ունին իրենց կենցաղակերպին համար: Ինչ պետք է ընեն եւ ինչ՝ ոչ, կրնայ առաջնորդել զիրենք լաւապէս: Որոշ ազատութիւն մըն ալ պետք է տալ անոնց, տեսնելու իրենց կատարելիք ընտրութիւնը:

Վեց տարեկաններ երը եօթի կ'անցնին, մանուկներուն մօտ կը զարգանայ ճիշդի եւ սիսալի դատողութիւն մը: Այս տարիքին նաեւ անոնք կրնան դատել, թէ իրենց կատարած արարքը լա՞ւ էր թէ վատ ուրիշներուն համար:

Հաւատքի գարզացում

Հաւատքի գարզացումը վեց տարեկաններուն մօտ կարելի է նկարագրել իրեն երեւակայական հաւատք, մանուկներուն մօտ հասարակաց հաւատքի կերպ մը: Հաւատքը կ'ամի պատմութիւններու, կերպարներու եւ խորիրդանշաններու միջոցաւ: Մանուկը տակաւին տրամաբանելու կարողութիւն չունի: Աստու-

ծոյ պատկերը կրնայ կազմուիլ անոր նտքին մէջ պատմութիւններու միջոցաւ, վարուեցողութիւններու ճամբով, որոնք ան կը տեսնէ իր ծնողներէն եւ շուրջիններէն:

Երեքեն մինչեւ եօթ տարեկան մանուկը փորձառութիւնը կ'ընբօնէ մէկ ամբողջութիւն իբրեւ: Իրաքանչիւր փորձառութիւն իրայատուկ կ'ըլլայ մանուկին համար, երբ անիկա չի կրնար փորձառութիւնները իրարու առնչել: Այս կարողութիւնը «կռահել» բառով կարելի է արտայայտել: Ենյան Ֆլաւուրը հաւատքի աճման այս նախադասութիւնը նկարագրած է իբրեւ կռահողական հաւատքը: Իբրեւ չափահասներ, մենք կը շարունակենք կռահել, այլապէս մենք բնաւ պիտի չկարենայինք գնահատել գեղեցիկ մայրամուտ մը, կամ արուեստի սքանչելի գործ մը, կամ ազդուեինք Եկեղեցւոյ արարողութեանց խորիրդանշաններէն:

Գիտնալով թէ ինչքան մեծ կարողութիւն մըն է ասիկա՝ կռահելը, մենք ալ պետք է ուսուցենք մանուկներուն պատկերներու եւ նշաններու միջոցաւ, երգի ու պարի ճամբով, ինչպէս նաեւ հաւատքը գօրացնող պատմութիւններ պատմելով: Պետք է զանոնք մասնակից դարձնենք Եկեղեցական արարողութիւններուն: Մեր անծնական օրինակներով պետք է ցոյց տանք անոնց Աստուծոյ սէրը մանուկներուն նկատմամբ, աղօքի ճամբով: Մանուկները կը կապվեն մեր ըրածները: Ուստի, միշտ նկատի պետք է ունենանք, որ սրբութեանց մասին մեր վերաբերումը դիտելով, իրենք ալ նոյնը պիտի ընեն:

ԱՇԱԿԵՐՑՏԵՐԸ ԻՆՉՊԵ՞Ս ԿԸ ՄՏԱԾԵՆ ՈՒ ԿԸ ՍՈՐՎԿԻՆ

Աշակերտներուն մտածելու եւ սորվելու կարողութիւնները գիտնալ՝ առիթ կու տայ ուսուցիչներուն ծրագրելու եւ օգտագործելու շարք մը կերպեր, որոնք կ'օգնեն իրաքանչիւր աշակերտին ընդլայնել իր ուսանելու կարողութիւնը: Ուսուցիչներ վաղուց գիտեն, թէ աշակերտները սորվելու տարբեր կերպեր ունին: Յարվըրտի փրոֆեսոր Յանուար Կարտնըրը ուսուցիչներու այս փորձառական գիտութիւնը սահմանած է: Իր «Մտքի Շրջագիծը» գրքին մէջ, հրատարակուած 1983-ին, Կարտնըրը սահմանում մը կ'առաջարկէ մարդոց սորվելու կարողութեան մասին, զոր կարելի է կոչել զանազան կարողութիւններ: Այս սահմանումին համաձայն, կարողութեան տարբեր մակարդակներ գոյութիւն ունին, սակայն իրաքանչիւր անհատ տարբեր կարողութիւն կը ցուցաբերէ մէկուն կամ միւսին մէջ: Որպեսզի կարելի ըլլայ բոլոր աշակերտները ներգրաւել, անհրաժեշտ է որ ուսուցիչները տարբեր նախա-

ձեռնութիւններու դիմեն, բոլոր մակարդակի աշակերտները մասնակից դարձնելու հաւաքական աշխատանքին:

Կարողութեան տարբեր մակարդակներ՝ որոնք սորվելու տարբեր աստիճաններ կը յայտնաբերեն.—

1. Խօսակցական-էզուական.— Բառեր գործածելու կարողութիւնը եւ լեզուն օգտագործելու շնորհը, թէ գրաւոր եւ թէ բանաւոր, այս կարողութեան իրայատկութիւնը կը ներկայացնեն: Խօսակցական այս կարողութեամբ աշակերտները լաւագոյնս կը սորվին կարողալով, գրելով, պատմութիւն լսելով կամ բարձրածայն կարողալով եւ զրուցատրութեամբ: Անոնք գաղացնեն, երբ խօսին անոնց մասին: Անոնք բազմաթիւ հարցումներ կը հարցմեն, ոչ թէ անուշադիր եղած ըլլալնուն պատճառով, այլ աւելի բան սորվելու համար: Յաճախ անոնք շատախոս կ'ըլլան ու կը զգութենեն, սակայն մեզի կը պարտադրեն որ առիթ տանք իրենց խօսելու եւ այդ ճաճբով սորվելու: Անոնք հաճոյք կ'առնեն այն պարտականութիւններեն, որոնք ընթերցում կու տան, պատմութիւն պատմել ունին, զրուցատրութիւն կամ բառախաղ ունին:

2. Դիտելով-մկատելով.— Դիտելով սորվողները կարիք ունին նայելու առարկաներուն եւ անոնք պատկերներու ճաճբով մտածելու կարողութիւն ունին: Անոնց դիտելու կարողութիւնը գորաւոր ըլլալով, գոյներու, կերպերու, չափերու, տեղի եւ ծեփի բարձր զգացողութիւն ունին: Անոնք այս բոլոր տարրերուն փոխադարձ յարաբերութիւնները լաւ կը ճաճնանան: Պատկերներու գործածութիւնը, արուեստի պարտականութիւնները, կերպարներն ու քարտզները մեծապես օգտակար կ'ըլլան անոնց սորվելու ընթացքին: Անոնք կը սիրեն պատկերացնել իրենց լսած պատմութիւնները, եւ երբեմն ալ կը նախընտրեն ընկերակցող երաժշտութիւն մը ունենալ:

3. Տրամաբանական-քուաբանական.— Տրամաբանականօրեն սորվողները իսկապես կը սիրեն հարցերը քննարկել եւ ըստ այն լուծել: Անոնք հարցերը կը տեսնեն, եւ կարողութիւն ունին մէկը միւսեն զատորոշելու: Անոնք «կը գրադին» հարցերով, եւ իրենց աշխատանքով աւելի բան կը սորվին, քան թէ տեսնելով կամ լսելով: Թատերական կերպը եւ ծեռային աշխատանքը իտեալ կերպն է այս տեսակի սորվողներուն համար:

4. Ֆիզիքական-մարմնական.— Ֆիզիքական սորվողներու համար լաւագոյն կերպը շարժումն է: Անոնք պատրաստ են իրենց ծեռքերը օգտագործելու մինչ կը խօսին, եւ կը սիրեն ֆիզիքական շարժումներով ներկայացնել այն ինչ որ կ'ըստն: Անոնք ամբողջ մարմնի շարժումներով կը մըտածեն եւ կը զարգացնեն իրենց փոխանցելիք տեղեկութիւնը: Անոնք կը սորվին դպնալով, եւ կը սիրեն իրարմէ զատել առարկաները: Անոնք յաճախ «կը խաղան» առարկաներով եւ աւելի լաւ կը սորվին գործելով, քան թէ տեսնելով կամ լսելով: Թատերական կերպը եւ ծեռային աշխատանքը իտեալ կերպն է այս տեսակի սորվողներուն համար:

5. Երաժշտական.— Երաժշտականօրեն սորվողները չափի բացառիկ զգացողութիւն կ'ունենան, ինչպէս նաեւ խօսակցութեան երաժշտականութեան հանդեպ սրբ (ինչպէս բանաստեղծութիւն): Անոնք առհասարակ իրենք զիրենք կ'արտայատեն երգեր յօրինելով, եւ երաժշտութիւն մը լսելնուն պէս՝ շարժումներ կատարելով: Այսպիսի սորվողներուն համար երաժշտութիւն, երգ եւ չափաւոր գործիքներ իտեալ միջոցներ են:

6. Միջ-անհատական (Փիխ-յարաբերական).— Սորվելու այս մակարդակը կարողութիւն կու տայ սորվողին մարդկային փոխ-յարաբերութիւնները լաւապես սորվելու: Փիխ-յարաբերական սորվողները շատ լաւ դիտողներ կ'ըլլան, եւ լաւապես կը կարդան մարմնի լեզուն եւ մարդկային ձայնի հիրայատկութիւնները: Անոնք կրնան ծանօթութիւն տալ, թէ մարդկէ ի՞նչ կը զգան, եւ ըստ այն կը պատասխանեն: Անոնք ընկերային ծեռնարկներէ հաճոյք կ'առնեն, ինչպէս նաեւ կը սիրեն աշխատիլ մէկու մը հետ կամ խնբային աշխատանքով:

7. Ներ-անձնական-հայեցողական.— Հայեցողական սորվողները օժտուած կ'ըլլան յատուկ զգայառնով եւ արթոնութիւնը կ'ունենան ճաճնալու իրենց ներքին զգացումները: Անոնք հաճոյք չեն առներ խնբային աշխատանքներեն, այլ կը նախընտրեն մտածել թէ ո՞վ են իրենք, եւ ո՞ւր է իրենց տեղը ընկերութեան կեանքին մէջ: Անոնք երբեմն կը ծանծրանան հաւաքական աշխատանքէն, եւ իրենք զիրենք կ'արտայայտեն անձնական՝ առանձնակախատանքներ կատարելով:

ՈՒՍՈՒՑՈՒՄԸ Կ'ՕԳՏԵ ՀԱՄԱՅՆ ՏԱՐԱԾՄԱՆ Ի՞նչ բան շեշտել երբ կ'ուսուցանեմք վեց եւ եօթ տարեկան երեխաներու

Ասսուուած ներկայացուցքը անոնց իրրեւ Ստեղծիչ, սիրող Դայր եւ Ամենակարող:

Մանուկներու երեւակայութեան մէջ Աստուած կը ներկայանայ իրեւ անձ մը: Անոնց համար Աստուած մեծ եւ զօրաւոր էակ մըն է: Անոնց համար Աստուած շատ իրապաշտ պատկերներով կը ներկայանայ, ինչպէս իրենց հայրը, մայրը, գիրենք սիրող բարեկամ մը. կամ իրենց խնամք տանող անձ մը: Մեր վարուեցողութիւնը իրենց մտքին առջեւ պիտի պատկերացնէ թէ ինչպիսի՞ն կրնայ ըլլալ Աստուած:

Ներկայացուցքը Եկեղեցւոյ օրէնքները

Վեց տարեկանին, մանուկներ պէտք է սորվին թէ Աստուած օրէնքներ ունի՝ Տասը Պատուիրանները:

Անոնց ներկայացուցքը այդ Տասը Պատուիրանները՝ Եկեղեցւոյ օրէնքները:

Կրնայ ըլլալ որ անոնք բոլոր օրէնքները չհասկընան իրենց մանրամասնութեանք, սակայն իրենց համար յստակ պիտի ըլլայ, որ Աստուած կ'ուզէ որ մենք որոշ ծեւով մը՝ օրէնքով ապրինք:

Այս օրէնքները իրենց ներկայացնելու մեր ծեւեն կախեալ պիտի ըլլայ Աստուածոյ մասին իրենց ունեցած տպաւորութիւնը, իրեւ խիստ դատաւոր, հնազանդութիւն պահանջող անձ, եւ կամ սիրող Աստուած, որ մեզ գործնական միջոցներ կ'առաջարկէ, մեր բարիքին համար միշտ:

Ֆատակ օրէնքներ դրէ, որպէս սահմաններ իրենց համար

Մանուկները մինչեւ դպրոց գալը, իրարմէ տարբեր փորձառութիւններ ապրած կ'ըլլան, եւ ճիշդն ու սիսալը իրենց համար կախեալ կ'ըլլայ իրենց ունեցած այդ փորձառութիւններէն:

Մեր սահմանած օրէնքները սովորական քաղաքավարութենան անողին պէտք է անցնին: Անոնք պէտք է յստակօրէն ըսեն, թէ ի՞նչն է ճիշդը Աստուածոյ Օրէնքին համեմատ:

Այդ օրէնքները չափանիշ պէտք է ըլլան, որոնց համեմատ պէտք է վերատեսութեան ենթարկեն իրենց վարուեցողութիւնը: Իրենց կենցաղը պէտք է հաճելի ընեն ոչ միայն մեզի, այլ նաև Աստուածոյ:

Յիշեցումները զանազան վայրերու մէջ եւ զանազան առիթներով շատ կարեւոր են անոնց բարոյական աճումին համար:

Աստուածոյ խորիրդատրութիւնը բացատրեցէք

Անոնք միշտ պիտի շփոթեն Յիսուսը Աստուածոյ ինտ: Բնաւ մի՛ ջանաք անոնց բացատրել Յիսուսի աստուածային եւ մարդկային բնութիւնները: Վեց եւ եօթ տարեկանները բնաւ պիտի չկարենան հասկնալ զայն:

Վեց եւ եօթ տարեկաններուն մտքին մէջ կ'ըլլան արդէն Աստուածոյ անակնակ արաքները, որոնց կը ծանօթանան Սուլը Գրային պատմութեանց ճամբով, ինչպէս Անառակ Որդիին պատմութեան մէջ յիշուած հօր կերպարը, սակայն եւ այնպէս անոնք շատ կը հաւնին այդ պատմութիւնը:

Ֆատակ եւ դիրամատչելի պատմութիւններ պատմեցէք

Սուլը Գրային պատմութիւններ, ինչպէս նաև Եկեղեցւոյ պատմութեննեն քաղուած դրուագներ, նպատակայարմար կ'ըլլան: Մանուկները իրենց տուններ որոշ հաւատքի փորձառութիւն մը ծեռք ծգած կ'ըլլան: Մենք է որ անոնց վրայ պիտի աւելցնենք նորեր՝ պատմութիւններու միջոցաւ:

Մանուկներու համար պատմութիւննը՝ պատմութիւն է. կը սիրեն, կը հասկնան եւ կը վայելեն զայն բառ առ բառ: Պատմութիւն մը խմբային զգացում կ'առաջացնէ զայն մտիկ ընողներուն մօտ, եւ այդ խումբին պատկանելիութիւն մը կը ստեղծէ շուտով, որոնք կը զնահատեն այդ պատմութիւնը իրեւ իրենց պատմութիւնը, Եկեղեցւոյ պատմութիւննը, եւ մեզի համար կարեւոր ըլլալուն համար կը պատմուի անիկա մեզի:

Մանուկներ շատ կը սիրեն որ պատմութիւնը անգան մը եւս կրկնուի: Ծնողները այնպիսի պատմութիւններ կը պատմեն, որոնք կարեւոր նշանակութիւն ունին մանուկներուն համար: Խսկ մանուկները միշտ կ'ուզեն որ ծնողները կրկնեն այդ պատմութիւնները:

Ստեղծագործական արտայայտութիւնները շեշտեցէք

Մանուկները իրապաշտ մտածողներ ըլլալով, նկարներ, ծեռային աշխատանքներ (անհատական թէ խմբային), հաւաքական խաղեր, պատմութեան վերյշեցումը իրենց կողմէ, ծեր պատմած պահուն, կ'օգնէ անոնց որ լաւապէս ըմբռնեն ներկայացուածը:

Պատկանելիութեան եւ վստահութեան մքնոլորտ ստեղծեցէք

Կրօնի դասաւանդման համար վստահութեան եւ պատկանելիութեան մքնոլորտ շատ կարեւոր է մանուկներուն համար, որպէսզի իրենք ալ անդամ զգան իրենք գիրենք Եկեղեցւոյ ու համայնքին:

Աղօքներ կատարեցէք ծեր ժողովուրդին համար

Մանուկները երբ պատմութիւններ լսեն կամ պատմեն, ատիկա գիրենք կրնայ մոել աղօքք ընելու: Մանուկին երեւակայութեան բնական հետեւանքը կը ռայ ըլլալ աղօքքը:

Դպրոցին կամ տան մէջ օգտագործելի աղօքներ սորվեցուցէք: Աղօքքի օրինակներ կրնաք գտնել աշակերտական դասագիրքին վերջաւորութեան:

Իրաքանչիւր մանուկ սորվելու տարբեր աստիճան կ'ունենայ, ուստի իրաքանչիւրին տարբեր ծեւով մօտեցէք:

ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ ՎԵՅ ԵՒ ԵՕԹ ՏԱՐԵԿԱՆՆԵՐՈՒԽ ՍՈՐՎԵՑՆԵԼՈՒ ՑԱՐՄԱՐ ԿԵՐՊԵՐ

- Սուրբ Գրային եւ այլ պատմութիւններ օգտագործեցէք:
 - Աշակերտները մասնակից դարձուցէք պատմութիւն պատմած ժամանակ:
 - Վարժութիւններ տուէք անոր հետ:
 - Դարցադրումներ կատարեցէք:
 - Խմբային հարց-պատասխանները քաջալերեցէք:
 - Ստուգեցէք աշակերտներուն ուշիմութիւնը:
1. Սուրբ Գրային պատմութիւնները կրկնելը պիտի օգնի աշակերտներուն՝ նտածելու Աստուծոյ եւ Աստուածաշունչի դրուագներուն մասին աւելի իրապաշտ կերպով: Այս պատմութիւններուն կրկնութիւնը կրնայ աշակերտները առաջնորդել Յիսուսի ապրած կեանքին մանրամասնութիւններուն եւ անոնցմէ բղոյող պատգամներուն: Անոնք տակաւին չեն կրնար հասկնալ Յիսուսի աստուածային ու մարդկային բնութեանց խորհուրդը, սակայն Անոր կեանքի իրական դրուագներն եկող պատկերները ապագային պիտի օգնեն մանուկներուն՝ հասկնալու Յիսուսի խօսքրուն իմաստը:
 2. Անոնց հետ միասին պատմութիւնները պատմելու ծեր մօտեցումը Աստուծոյ մասին խօսելու պատմողական լեզու մը պիտի զարգացնէ անոնց մօտ:
 3. Թատերական ներկայացումները, կամ խամաճիկներով պատմուող պատմութիւնները հետք-հետ պիտի զարգացնեն անոնց մէջ ապագային ըսուածները հասկնալու կարողութիւնը:

4. Մանուկները կը կապուին թատերական ներկայացումներուն, որոնք իրենց ամենօրեայ կեանքին հետ կապ ունին: Անոնց ուշադրութիւնը կը գոաւեն մանաւանդ լաւ տիպարները կամ դրական արարքները:
5. Ահաւասիկ կարգ մը կերպեր, որոնք Աստուածաշնչական կերպարները եւ պատգամները կենդանի կը դարձնեն:-
 - ա) Աղօքք կարդալու նման կարդացէք պատմութիւնը եւ ծեր բառերով վերարտադրեցէք, ծեր ձայնին մէջ արտայայտչականութիւն դնելով եւ հարցադրումներ կատարելով:
 - բ) Լուսաբանութիւններ տուէք, որպեսզի կարենան ըմբռնել պատմութիւնը:
 - գ) Պարզ աղօքքներու մէջ եւս մէջբերեցէք Աստուածաշնչական պատմութիւնը, եւ Աստուածաշունը դրէք ծեր սեղանին վըրայ:
6. Այս տարիքի մանուկներուն յարմար Աստուածաշնչական պատմութիւններ ընտրեցէք:-
 - ա) Յիսուսի հրաշքներէն ծեր ընտրութիւնները նուազագոյնի իշեցուցէք, որպեսզի մանուկներուն մտքին մէջ Յիսուսի կերպարը չդրոշմուի իբրև կախարդական կարողութեամբ մէկը, որ ամէն անձի փափաքը կը կատարէ:
 - բ) Յիսուսի մահուան եւ յարութեան պատմութենէն բացի, որ հիմնական պատգամն է մեր հաւատքին, գգուշացէք նաև բնական աղետներու եւ անբուժելի հիւանդութիւններու, եւ Աստուծոյ իր ժողովութիւն հանդեպ ունեցած բարկութիւնը ներկայացնող դրուագները ընտրել: Այս տարիքի մանուկները տակաւին չեն կրնար ըմբռնել Աստուծոյ փրկագործական ծրագիրը կամ ներողամտութիւնը: Մանուկները լսած պէտք է ըլլան ծեր պատմելիքները (Եկեղեցւոյ կամ տան մէջ), եւ ապա իրենք գտնեն Աստուծոյ փրկարար դերակատարութիւնը այդ պատմութեան մէջ:
 - գ) Այս տարիքին շեշտը դրէք պատմութեանց ճամբով ցոյց տալու Աստուծոյ սերը եւ նախախնամութիւնը:
7. Երբ մանուկները արդէն լսած են պատմութիւնը, շատ պարզ հարցումներ կրնաք հարցնել անոնց. Ո՞վ, Ի՞նչ, Ե՞րբ, Ո՞ւր, եւ Ի՞նչո՞ւ: Կրնաք նաև աւելի ազդու հարցումներ հարցնել, թէ ի՞նչ

կը մտածեն տուեալ կերպարին կամ դեպքին մասին: Կամ՝ թէ ի՞նչ զգացած կրնայ ըլլալ այս կամ այն անձը, որ յիշուած էր դրուագին մէջ: Պատմութեան իմաստը կամ խորը փնտռող հարցումներ մի՛ հարցնէր բնաւ: Վեց եւ եօթ տարեկանները տակաւին այդ հասունութիւնը չեն ունենար:

ԴԱՍԱՐԱԾ ԿԱՌԱՎԱՐԵԼ

Խունք մը երեխաներ կառավարելը, մանաւանդ երբ ամոնք պատանեկութեան տարիքի մէջ են, երբեմն հաճելի, երբեմն ալ անտանելի աշխատանք է: Հետեւեալ առաջարկութիւնները օգտագործելով, կրնաք շատ դիւրաւ կառավարել ձեր դասարանը եւ դասապահը վերածել հաճելի ժամուան նը:

ՕՐԵՆՔՆԵՐ ՈՐՈՇ ՃԻՇՈԳԱ ԱԲԻՄԻ ԱՎՐԻՒՑ

Պատանիներ դասարանին մէջ հանգիստ կ'ապրին, երբ գիտնան թէ ի՞նչ է իրենցն պահանջուածը: Տարեշրջանի սկզբնաւորութեան ըստ անոնց թէ ի՞նչ են ձեր ակնկալութիւնները դասարանէն: Ապա զիրենք հրաւիրեցէք միասնաբար օրէնքներ սահմանելու, որոնց կարիքը ունին, հասնելու համար իրենց նպատակին: Օգնեցէք անոնց որ օրէնքներ սահմանն, հիմնըւած փոխադարձ յարգանքի, պատասխանատուութեան եւ մասնակցութեան վրայ: Այնպէս ըրէք որ օրէնքները ընդհանուր ըլլան եւ ոչ թէ մասնաւոր կամ սահմանափակ թիւով: Մեծ պաստակի մը վրայ գրեցէք զանոնք եւ կախեցէք այնպիսի տեղ մը, որ յաճախ անոնց մէկը կամ միւսը մէջբերելը դիւրին ըլլայ: Պետք պիտի զգաք յաճախ յիշեցնելու զանոնք ծեզի յանձնուած մանուկներուն:

Լաւ վարմումք սորվեցուցէք՝ օրինակներով

Ձեր ուզած վարմումքը ծեւեցէք աշակերտներուն դիմաց: Դուք անոնց պէտք է սորվեցնեք Ոսկեայ Օրէնքը. «Ինչ որ կ'ուզէք մարդիկ ընեն ծեզի, դուք նոյնը ըրէք անոնց»: Եթէ ձեր դասարանը փոքրաթիւ է, կրնաք երկու խումբերու բաժնել զայն, քան թէ չորս կամ աւելի, ինչպէս որ կ'ըսուի դասին մէջ: Իսկ եթէ մեծ թիւ կը կազմէ դասարանը, աւելի խումբերու կրնաք բաժնել:

Բարձրածայն կարդալ դասարանին մէջ

Իւրաքանչիւր դաս ունի բաժին մը բարձրածայն կարդացուելու համար: Վեց տարեկանները նոր և սկսին ընթերցանութեան: Ուստի անոնց բոլոր ընթերցումները դուք պէտք է առաջնորդէք: Բարձր կարդա-

ցէք եւ ըստ որ իրենք ալ ծեզի հետ կարդան: Երբեմն ըստ թէ ո՞ւր հասած էր էջին վրայ:

Պատմութիւններն շատերը բառեր ունին, որոնք պէտք է ամբողջացուին, կամ փոքր պատկերներ: Դուք պատմութիւննը կարդացած ժամանակ, անոնք կրնան նկարին կողքի բառը ըսել բարձրածայն: Այսպիսով զանոնք մասնակից պիտի դարձնէք ծեր ընթերցանութեան:

Ուշադրութեան հրաւիրելու եւ մտիկ ընելու սովորութիւնը զարգացուցէք անոնց մօտ:

Մեղմ խօսող ուսուցիչ մը աւելի ուշադրութիւն կրնայ հրաւիրել իր վրայ, քան բարձր ծայն ունեցող մը: Ձեր ծայնին մէջ բարձր ու ցած աստիճանաւորում դնելը կրնայ ազդել աշակերտներու ուշադրութիւնը հրաւիրելու իմաստով: Բնաւ մի սկսիք խօսելու, մինչեւ որ բոլորին ուշադրութիւնը ծեր վրայ չկերպուացնէք: Եւր սպասելը արդեն նշան մըն է իրենց համար: Յըստակ խօսեցէք, եւ խուսափեցէք ծեր ըսածը կրկնելէ անուշադիր աշակերտներուն համար:

Աշակերտները տեղեակ պահեցէք օրուան ծրագրին մասին

Աշակերտները շատ կ'ուզեն գիտնալ, թէ ի՞նչ կայ տակաւին ընելիք այդ պահուան ընթացքին, հակառակ անոր որ մանուկները պիտի չիշեն ծեր բոլոր ըսածները: Կրնաք ծեր դասին հիմնական բաժինները խորհրդանշող նշաններ դնել պատին վրայ, երբ հրաքանչիւր բաժինը սկսիք: Այսպէս՝ մեծ հարցման նշան մը «Գիտէի՞ր...» բաժնին համար, քաց գիրք մը՝ «Աստուածաշնչական դրուագ»ի բաժնին համար, պատկերներ կամ մոմներ՝ «Կեանքը եկեղեցւոյ մէջ» բաժնին համար:

Կարգ կանոնին հոգ տարելք

Երբ աշակերտներն մէկը ամինազանդ գտնուի, մի՝ «գնահատէք» զայն բոլորին ուշադրութիւնը անոր վրայ հրաւիրելով: Կամաց մը անոր մօտեցէք եւ յիշեցում կատարեցէք դասարանի օրէնքներուն մասին: Երբ մանուկը շարունակէ իր նոյն ընթացքը, յաջորդի ծնողներուն օգնութեան դիմեցէք:

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՅՅԸ ԳՈՐԾԱԾԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Ուսուցիչ Ուղեցոյցը նպատակ ունի օգնելու եւ առաջնորդելու ուսուցիչը հրաքանչիւր դաս պատրաստելու եւ սորվեցնելու համար: Ան կը ներկայացնէ հետեւեալ ընթացքը:

Դասին բնաբանը.— Նպատակն է հիմնական նիւթը փոխանցել աշակերտներուն:

Աստուածաշնչական հատուածներ.— Դասերը ամոնց վրայ իհմնուած են: Իւրաքանչիւր էջի սկզբնաւորութեան պիտի գտնեք ասոնք, ինչպէս նաեւ այս ուղեցոյցին մէջ: Աշակերտներուն հետ հանդիպելէ առաջ ասոնց պէտք է նայիք:

Գոց գիտմալու համար մը.— Համարը առնչուած կ'ըլլայ դասին ընդհանուր նիւթին հետ, եւ պէտք է գոց սորվի զայն իւրաքանչիւր աշակերտ:

Ընկալումներ.— Ցանկը կազմեցէք այս կարեւոր գիտելիքներուն, որոնք իւրաքանչիւր աշակերտ պէտք է գիտնայ: Այս գիտելիքները ուսուցիչը պարտականութեան վրայ կը պահեն: Այս գիտելիքներուն ակնարկելով, ուսուցիչը կրնայ գիտնալ թէ Աստուածաշնչական դրուագին ո՞ր բաժինները աւելի պէտք է ընդգույնին, եւ պարտականութիւնները ինչպէս պիտի օգնեն իրականացնելու այդ:

Դասաւրում.— Իւրաքանչիւր դասի բովանդակութիւնը դասաւրեցէք հարկ եղած ժամանակով: Միշտ յիշեցէք, որ ժամանակի սահմանը ուղեցոյց է, անշուշտ քիչ մը աւելի կամ քանի մը վայրկեանը հարց չէ, ճայած աշակերտութեան թիւին եւ անոնց կարողութեան: Ցամենայնդեպս, մտքի մէջ ունենալով սահմանուած ժամանակը, ծեզ պարտաւրութեան տակ պիտի դնէ ծիշդ ժամանակին աւարտելու դասին բոլոր նասերը:

Նիւթեր.— Կարգ մը նիւթերու պատրաստութիւնը եւ դասարանին մէջ գտնուիլը օգտակար պիտի ըլլայ թէ ծեզի եւ թէ աշակերտներուն:

